

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԻ ԲՈՒՇԵՂԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Լարուի Սանտուր
*Երևանի պետական համալսարան,
մանկ. ամբիոնի ասպիրանտ*

Համառոտ ներածական: Բարձրագույն կրթության համակարգը յուրաքանչյուր երկրի զարգացման և առաջադրված նպատակների իրականացման գլխավոր ենթակառուցվածքներից է, որը մշտապես կարիք ունի բարեփոխումների: Հոդվածում վերլուծվել է Իրանի Բուշեհր նահանգում բարձրագույն կրթության ներկա վիճակը:

Բանալի բառեր: Իրանի Բուշեհր նահանգ, բարձրագույն կրթություն, կրթության կառավարում, Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարություն, Առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարություն:

Հիմնախնդիրը: Զարգացող երկրներում, այդ թվում՝ նաև Իրանում, բարձրագույն կրթությունը հասարակության կայուն զարգացման և առաջընթացի շարժիչ ուժն է: Յուրաքանչյուր երկիր ձգտում է իր բարձրագույն կրթության համակարգը համընթաց դարձնել 21-րդ դարի սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումներին և հասարակության պահանջներին, հետևաբար Իրանի բարձրագույն կրթության համակարգի կառավարման տարբեր կողմերի ու խնդիրների ուսումնասիրությունը կարող է նպաստել նրա արդյունավետության բարձրացմանն ու արդիականացմանը, մասնավորապես Իրանի Բուշեհր նահանգում:

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է լուսաբանել Իրանի Բուշեհր նահանգում բարձրագույն կրթության ներկա վիճակը:

Հետազոտության նորայթը: Առաջին անգամ Իրանի Բուշեհր նահանգի օրինակով ուսումնասիրվել են Իրանի բարձրագույն կրթության բարելավման ու զարգացման գործընթացները և վեր են հանվել առկա խնդիրներն ու մարտահրավերները:

Հետազոտության վերաբերյալ գրականության վերլուծություն: Կառավարման տարբեր մեթոդների և ոճերի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ ու հետազոտություններ են կատարվել միջազգային և իրանական մակարդակներում: Նրանց թվում նշենք՝ Ռոբերտ Հաուս, Փալ Հերսի, Քենտ Բլանչարդը, Ֆրեդ Ի. Ֆիդլեր, Աքբար Քեշավարզ, Սոհրաբ Խալիլի Շուրինի, Սեյեդ Սոհամմադ Մոդիմի: Այս գիտնականները լուսաբանել են հիմնախնդրի տարբեր կողմերը, ձևակերպել տեսական դրույթներ, առաջադրել մոդելներ, իրականացրել սոցիարցումներ՝ խնդիրը դիտարկելով տարբեր կառույցներում և տարբեր համախմբերում (սոցիարցման բազաներում):

Հիմնական նյութի շարադրանքը: Ներկայումս Իրանի ֆորմալ կրթության համակարգի կառավարումն իրականացնում են երեք նախարարություններ՝ ա) Իրանի կրթադաստիարակության նախարարությունը, որի ենթակայության տակ է գտնվում հանրակրթությունը, բ) Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարությունը, որը կառավարում է բարձրագույն կրթության համակարգը, գ) Առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարությունը, որը տնօրինում է բժշկական ճյուղերի ու մասնագիտությունների գծով բարձրագույն կրթության ոլորտը:

Իրանի բարձրագույն կրթության նպատակներն են.

ա. գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացում, հետազոտական ոգու խթանում, հետազոտական մտքի քաջալերում ու տարածում և գիտության արժևորման մշակույթի զարգացում,

բ. երկրի կրթական, գիտական և տեխնիկական տեղի ու դիրքի բարելավում,

գ. գիտությունների, գիտելիքների, համամարդկային և իսլամական արժեքների, արվեստի, գեղագիտության և իրանական ու իսլամական քաղաքակրթական ու գիտական ժառանգության ընդլայնում և խորացում,

դ. մասնագետ կադրերի պատրաստում և մարդկային ներուժի զարգացում,

ե. տեխնիկական գիտելիքների ու հմտությունների զարգացում և հասարակության մեջ գիտական մտածողության տարածում,

է. համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների անկախության և գիտական ազատության պահպանում և ամրապնդում [5, էջ 78]:

Բարձրագույն կրթությունն Իրանի Բուշեիր նահանգում

Բուշեիրը Իրանի հարավային նահանգներից է, գտնվում է Պարսից ծոցի ափերում և ունի ավելի քան 620 կիլոմետր երկարությամբ ծովային սահման: Ռազմավարական դիրքի, նավթային խոշոր կորպորացիաների առկայության և արդյունաբերական խոշորամասշտաբ նախագծերի շնորհիվ այս նահանգն ունի տնտեսական և հեռահար կարևորություն: Հնուց ի վեր Բուշեիր նահանգը գիտության և մշակույթի օրրաններից մեկն է եղել, սակայն գրավոր հիշատակումներն ու պատմական վկայությունները կցկտուր են: Կատարված ուսումնասիրությունները բարձրագույն կրթության սկզբնավորումն այս նահանգում հիշատակում են Ղաջարական դինաստիայի իշխանության վերջին շրջանում (1899 թ.), երբ արդեն 48 տարի էր անցել Ղաջարական պալատի մեծ վեզիր Ամիր Քաբիրի հրամանով Թեհրանում Ղար ալ Ֆոնուն բարձրագույն դպրոցի հիմնադրումից [2, էջ 11], և Բուշեիրի և նավահանգիստների կառավարիչ նահանգապետ Միրզա Ահմադ խան Ղարյա Բեյգի կողմից հիմնադրվեց Սա'ադաթ բարձրագույն դպրոցը [3, էջ 18]:

Ներկայումս Բուշեիր նահանգի համալսարանները (ինչպես երկրի բոլոր մյուս նահանգներում) գործում են Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության ենթակայությամբ: Գլխավոր բուհերն են [6, էջ 1].

• Պարսից ծոցի համալսարան, հիմնադրվել է 1991 թ.՝ Իրանի հոգևոր առաջնորդի հրամանով Բուշեիր կատարած այցելության ժամանակ: Այս համալսարանը, գտնվելով Պարսից ծոցի մերձակայքում և այդտեղ կառուցված նավթի ու գազի արդյունաբերական ընկերության «Փարս» կորպորացիայի մոտ, ռազմավարական նշանակություն ունի: Պարսից ծոցի համալսարանն ունի հինգ ֆակուլտետ.

• Ճարտարագիտական ֆակուլտետ. հիմնադրվել է 1992 թ. սեպտեմբերին, ունի մեխանիկական ճարտարագիտություն և քաղաքաշինության ճարտարագիտություն մասնագիտությունները: Ժամանակի ընթացքում նոր ճյուղեր ավելացան համալսարանում, և այսօր բակալավրիատի մակարդակում կրթություն է իրականացվում նաև ծովային ճարտարագիտության (նավաշինություն), քիմիական ճարտարագիտության և գազի արդյունաբերության, էլեկտրոնիկայի ճարտարագիտության (կապի և հաղորդակցության) և նավթամշակման ճարտարագիտության գծով: Մագիստրատուրայի մակարդակում կրթություն է իրականացվում քաղաքաշինության ճարտարագիտության, գազի տեխնոլոգիաների և փոխադրումների ճարտարագիտության, մեխանիկայի ճարտարագիտության և քիմիական ճարտարագիտության մասնագիտություններով:

• Բազային (տեսական) գիտությունների ֆակուլտետ. հիմնադրվել է 1994 թ. քիմիայի ճյուղում, իսկ ներկայումս բակալավրիատի մակարդակում կրթություն է իրականացնում նաև մաթեմատիկայի, ֆիզիկայի և վիճակագրության ճյուղերում: Մագիստրատուրայի մակարդակում կրթություն է իրականացվում քիմիայի տարբեր ենթաճյուղերի, միջուկային ֆիզիկայի և մաթեմատիկայի մասնագիտությամբ:

• Գրականության և հումանիտար գիտությունների ֆակուլտետ. լեզու և գրականություն, անգլերեն, գրադարանավարություն:

• Ագրարային և բնական ռեսուրսների ֆակուլտետ. հիմնադրվել է 1995 թ. այգեգործություն մասնագիտությամբ, հետագայում ավելացել է նաև բուսական արտադրության տեխնոլոգիաներ ճյուղը: Մագիստրատուրայի մակարդակում գործում են այգեգործության և ձկնաբուծության ճարտարագիտություն ճյուղերը:

• Ճարտարապետության, քաղաքաշինության և կիրառական արվեստների ֆակուլտետ. հիմնադրվել է 2005 թ. և ներկայումս կրթություն է իրականացնում բակալավրիատի մակարդակում ճարտարապետական ճարտարագիտություն ճյուղում:

• Իսլամական ազատ համալսարան, Բուշեհրի մասնաճյուղ. հիմնվել է 1985 թ. տեղի բնակչության պահանջով ու համագործակցությամբ և նահանգային պատասխանատուների ջանքերով: Այն իր գործունեության տարիներին ընդլայնվել ու զարգացել է և այժմ ունի հետևյալ մասնագիտությունները.

• Տեխնիկական և ճարտարագիտական ճյուղեր. էլեկտրոնիկա, հզորության էլեկտրոնիկա, քաղաքաշինություն, ձկնաբուծություն, կապ և հաղորդակցություն, համակարգչային գիտություններ, ճարտարապետություն, քիմիա, քիմիական արդյունաբերություն՝ բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակներում:

• Հումանիտար գիտություններ. իրավաբանություն, աստվածաբանություն, անգլերեն լեզու, պարսից գրականություն, կրթական խորհրդատվություն, ֆիզկուլտուրա, կրթության կառավարում, հաշվապահություն, տնտեսագիտություն, թատերական, կինոարվեստ, մշակութային կառավարում, տարրական դպրոցի կրթություն, մաքսային ծառայություններ: Երեք մակարդակներով է կազմակերպվում կրթությունը՝ փորձագիտական, բակալավրիատ, մագիստրատուրա:

• Լրացուցիչ կրթության ֆակուլտետ. հիմնադրվել է 1997 թ. պարսից գրականության ճյուղում և մագիստրատուրայի մակարդակով: Այս տարիների ընթացքում մագիստրատուրայի մակարդակում ավելացել են հետևյալ ճյուղերը՝ էլեկտրոնիկա, կապի էլեկտրոնիկա, քաղաքաշինություն-սեյսմակայունություն, կառույցների շինարարություն, պարսից գրականություն, մանկավարժություն՝ դասի պլանավորում, մանկավարժություն՝ կրթական ծրագրում, մանկավարժության պատմություն և փիլիսոփայություն, կրթության կառավարում, միջազգային իրավունք, քրեական իրավունք և քրեագիտություն, հին լեզուներ և մշակույթ, դրամատիկական արվեստ: Այս բուհը ասպիրանտուրայի մակարդակի կրթություն է իրականացնում միայն պարսից գրականության ճյուղում:

• Բուշեհրի բժշկական համալսարան. հիմնադրվել է 1983 թ. սկզբում Նարջեսի անվան բուժքույրական քոլեջ ձևաչափով, որն աշխատում էր Բուշեհրի առողջապահության կազմակերպության ենթակայությամբ և միայն փորձագիտականի մակարդակում էր, իսկ 1989 թ. դարձավ բուժքույրական և մանկաբարձական համալսարան: Այս ֆակուլտետը մինչև 1990 թվականը գործում էր Շիրազի բժշկական համալսարանի ենթակայությամբ, սակայն այդ տարվանից անկախացավ և դարձավ ինքնուրույն՝ ուղղակի ենթարկվելով Առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարությանը: Բուշեհրի բժշկական համալսարանը ներկայումս ունի երեք ֆակուլտետ և մեկ քոլեջ:

• Փայամ Նուր համալսարան. հիմնադրվել է 1991 թ. Բուշեհրում: Այն պետական ամենաընդարձակ բուհական ցանցն է Իրանում, որը 6-րդ տեղն է գրավում աշխարհի բաց համալսարանների շարքում, իսկ Ասիայում՝ երկրորդ տեղը: Այս համալսարանն իրականացնում է մասամբ առկա, մասամբ էլ հեռավար կրթություն, ընդ որում՝ օգտագործվում են ինքնուսույց ձեռնարկներ և կրթական մի շարք տեխնոլոգիաներ, այդ իսկ պատճառով ուսանողների մշտական ներկայությունը դասերին պարտադիր չէ: Պարբերաբար տեղի են ունենում խորհրդատվական հանդիպումներ:

• Գիտակիրառական մայր համալսարան. հիմնադրվել է 2003 թ.՝ նպատակ ունենալով բարձրացնել տնտեսական տարբեր հատվածներում աշխատող կադրերի աշխատանքային հմտությունները և գործնական կարողությունները: Համալսարանն ունի չորս ճյուղ՝ 1.արդյունաբերություն, 2.սոցիալական աջակցություն, 3.մշակույթ և արվեստ, 4. ագրարային:

Եզրակացություն: Իսլամական հեղափոխությանը հաջորդած տասնամյակներում բարձրացել կրթությունը մի շարք ուղղություններով բարձր վերելք է արձանագրել Իրանի Բուշեհր նահանգում, դրանք են՝ կրթական շենքերի ընդլայնում, տարբեր մեթոդներով, ձևաչափերով ու գործառույթներով աշխատող համալսարանների հիմնադրում, ինչպես, օրինակ, հեռավար կրթություն իրականացնող Փայամ Նուրը, Ազատ համալսարանը՝ իր ուսուցման լիաժամ և ոչ լիաժամ ռեժիմներով,

Գիտակիրառական համալսարանը: Չափազանց մեծացել է այդ համալսարաններում կանանց ներգրավվածությունը:

Չնայած Իրանի կրթության համակարգի զարգացման վաղեմի անցյալին և հարուստ ավանդներին՝ ներկայումս կան մի շարք բացթողումներ ու մարտահրավերներ.

-երկրի ոչ բոլոր մարզերին են հասանելի բարձրագույն կրթության հավասար հնարավորություններն ու համաչափ բաշխումը,

-Իրանի բնակչության և երիտասարդների թվի համեմատությամբ բարձրագույն կրթության քանակական հնարավորություններն ու տարողությունը անբավարար են,

-մասնագիտական ճյուղերը համապատասխան չեն ժամանակի պահանջներին և հասարակության կարիքներին,

-բարձրագույն կրթության կառավարման համակարգը խիստ կենտրոնացված է, և լիարժեքորեն հաշվի չեն առնվում մարզերի տեղական պահանջներն ու առանձնահատկությունները,

-տեխնոլոգիական հիմքն ու ենթահողը անբավարար են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայերի Աբդոլիադի, Իրանի մտավորականների առաջին շփումները արևմտյան բուրժուազիայի քաղաքակրթական երկու գործելակերպի հետ, Թեհրան, 2001:

2. Ղասեմի Փույա Էդբալ, Նորագույն դպրոցները Ղաջարական շրջանում. Հիմնադիրները և առաջատարները, «Համալսարանական հրատարակությունների կենտրոն» հրատ., Թեհրան, 1999:

3. Մաշայեխի Ա., Բուշերի Սա'ադաթ դպրոցը մի քանի դիտանկյուններից, «Համալսարան» հրատ., Բուշեր, 1998:

4. Մեհդիգադե Մ. և Սալամաթ Ս., Իրանի Իսլամական Հանրապետության սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման 6-րդ հնգամյա ծրագրի օրենք, Օրենքների ու կանոնների մշակման և հրատարակման փոխտնօրինության հրատ., Թեհրան, 2018:

5. Սադաթի Նեժադ Ս. և ուրիշներ, Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության օրենքների ու կանոնների ժողովածու (Ա. և Բ. հատորներ), Իրանի կրթության գնահատման ու թեստավորման կազմակերպության հրատ., Թեհրան, 2013:

6. <https://www.uniref.ir/Province7.html>:

ВЫСШЕЕ ОБРАЗОВАНИЕ В БУШЕРЕ, ИРАН

Լարու Мансур

Ереванский государственный университет

Аннотация

Краткое введение. Система высшего образования является одной из главных инфраструктур для развития и реализации поставленных целей любой страны, которая постоянно нуждается в реформировании. В статье проанализировано современное состояние высшего образования в иранской провинции Бушер. Изучение различных аспектов и проблем управления системой высшего образования Ирана может способствовать повышению ее эффективности и модернизации, в частности, в иранской провинции Бушер.

Цель исследования, проводимого в рамках статьи, – осветить текущее состояние высшего образования в иранской провинции Бушер.

Научная новизна исследования. Впервые на примере иранской провинции Бушер исследованы процессы совершенствования и развития высшего образования Ирана, выявлены существующие проблемы и вызовы.

Ключевые слова: провинция Бушер Ирана, высшее образование, управление образованием, Министерство наук, исследований и технологий, Министерство здравоохранения, лечения и медицинского образования.

Список использованной литературы

1. Хайери А., Первые контакты иранской интеллигенции с двумя цивилизованными практиками западной буржуазии, Тегеран, 2001.

2. Гасеми Пуя Э., Современные школы в эпоху Гаджара. Основатели и руководители, Издательство Университетского издательского центра, Тегеран, 1999 год.

3. Машаехи А., Школа Саадат в Бушере с нескольких точек зрения, Издательство “Хамсайе”, Бушер, 1998.

4. Мехдизаде М. и Саламат С., Закон 6-й Пятилетней программы социально-экономического и культурного развития Исламской Республики Иран, Публикация заместителя директора по разработке и публикации законов и правил, Тегеран, 2018 год.

5. Садати Неджад С. и другие, Сборник законов и правил Министерства науки, исследований и технологий (Тома А и В), подготовленный издательским центром Иранской организации по оценке и тестированию в области образования, Тегеран, 2013.

HIGHER EDUCATION IN BUSHEHR PROVINCE, IRAN

Larooi Mansoor

Yerevan State University, PhD student

Summary

As the important and fundamental infrastructure for improvement, growth and development and for the achievement of the expected goals of countries, education systems and especially higher education systems need reforms. The article analyzes the current status of higher education in the Bushehr Province, Iran. A study of the various aspects and problems of Iran's higher education management system can help to modernize its effectiveness, particularly in the Iranian province of Bushehr.

The purpose of the research carried out within the framework of the article is to cover the current state of higher education in the Iranian province of Bushehr.

The scientific novelty of the research. For the first time, the process of improving and developing Iran's higher education was studied on the example of the Iranian province of Bushehr, and the existing problems and challenges were identified.

Keywords: Iranian province of Bushehr, Higher Education, Education management, Ministry of Science, Research and Technology, Ministry of Health, Treatment and Medical Education.

References:

1. Hayeri A., The first contacts of the Iranian intellectuals with the two civilized practices of the Western bourgeoisie, Tehran, 2001.
2. Ghasemi Pooya E., The modern schools in the Ghajar era. Founders and leaders, University Publishing Center Publishing House, Tehran 1999.
3. Mashayekhi A., Bushehr Sa'adat School from several angles, "Hamsaye" Publishing House, Bushehr, 1998.
4. Mehdizadeh M. and Salamat S., Law of the 6th Five-Year Program of Socio-Economic and Cultural Development of the Islamic Republic of Iran, Publication of the Deputy Director for Development and Publication of Laws and Rules, Tehran, 2018.
5. Sadati Nejad S. and others, Collection of Laws and Rules of the Ministry of Science, Research and Technology (Volumes A and B) by the Iranian Education Evaluation and Testing Organization publish center, Tehran, 2013.
- 6.<https://www.uniref.ir/Province7.html>.

Материал был представлен и отправлен на рецензию: 29.10.2021

Принято к публикации: 01.11.2021

Рецензент: канд.пед. наук, доцент Мери Аветисян

The material was submitted and sent to review: 29.10.2021

Was accepted for publication 01.11.2021

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Mary Avetisyan